ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ
«ԿՈՒՄԱՅՐԻ» ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆ ՀՈԱԿ
3104, Գյումրի, Վարոնանցի հրապարակ, 1
Հեռ. (+374.93)191877

«6» 08 2025 թ.

№ 061

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ղուկասյան,

2022 թ. ապրիլի 13-ին Շիրակի մարզպետի աշխատակազմից Գյումրու համայքապետարան է առաքվել հանձնարարական (Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 6766–2022 համարով) կազմակերպել հասարակական, քաղաքական, մշակութային գործիչ Հարո Սասունու արձանի տեղադրման գործընթացը Գյումրիում, որը նախաձեռնել են նրա զավակները՝ երջանկահիշատակ որդին Բաբկեն Սասունին և թոռը Քրիստափոր Սասունին՝ դիմելով <<Զորավար Սեպուհ>> պատմաքաղաքական վերլուծական կենտրոն հասարակական կազմակերպության ղեկավար պատմական գիտությունների դոկտոր ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր Ա. Ներսիսյանին: Նրանք 2,40 սմ բարձրությամբ արձանը պատրաստ են նվիրել Գյումրուն: Արձանի քանդակագործն է հայտնի քանդակագործ Միսակ Մելքոնյանը: Գյումրու համայնքապետի հանձնարարականով <<Կումայրի>> պատմամշակութային արգելոց-թանգարանում կազմակերպվեց մասնագիտական հանրային քննարկում, որի ժամանակ մի շարք նշանավոր մասնագետներ՝ ճարտարապետներ, քանդակագործներ և նկարիչներ կարծիքներ հայտնեցին արձանի տեղադրման վայրի, գեղարվեստական արժեքի և արձանի տեղադրման կարևորության շուրջ (արձանագրությունը կցվում է):

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Քարտուղարության բաժին
ՍՏԱՑՎԱԾ է 06.08 2025 թ.
ԳՐԱՆՑՎԱԾ է № 11118

Մասնագիտական-հանրային քննարկման արդյունքները և արձանի էսքիզի լուսանկարները թանգանի աշխատակազմը տեղադրեց էջում, որի արդյունքում հայտնվեց բարերար՝ Իվան Ալդհաջյանը, որը պատրաստակամություն հայտնեց հոգալ Պոռշյան և Նժդեհի փողոցների խաչմերուկում արձանի տեղադրման և շրջապատի բարեկարգման ծախսերը: Խնդրում ենք Գյումրու ավագանու հաստատմանը ներկայացնել <<Կումայրի>> պատմամշակութային արգելոց-թանգարանի՝ արձանի տեղադրմանը վերաբերող որոշման նախագիծ:

Հարգանքով՝ *Դ. Ավագյան*